

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՂԱՄՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑԻ ՎԻՍԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Է 00. 03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի զիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ- 2017

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АДАМЯН СУСАННА ХАЧАТУРОВНА

ЭПИГРАФИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРХИЕПИСКОПА МЕСРОПА
СМБАТЬЯНЦА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата исторических наук по
специальности 07. 00. 03 «Археология»

ЕРЕВАН- 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ. գ. դ., պրոֆ. Գր. Մ. Գրիգորյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դոկտոր Կ. Ա. Մաթևոսյան
պ. գ. թեկնածու՝ Դ. Հ. Միրիջանյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պատմության թանգարան հնագիտության բաժին

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. հունիսի 27-ին ժամը 14.00 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. մայիսի 22-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Պատմական գիտությունների թեկնածու Հ. Ա. Մելքոնյան

Тема диссертации утверждена на ученом совете Института археологии и этнографии НАН РА

Научный руководитель: д. и. н., проф. Гр. М. Григорян

Официальные оппоненты: д. и. н. К. А. Матевосян

к. и. н. Д. Г. Мириджанян

Ведущая организация: Музей истории Армении, отдел археологии

Защита состоится 27 июня 2017 г. в 14.00 часов, на заседании специализированного совета 007 ВАК по археологии и этнографии при институте археологии и этнографии НАН РА (адрес- Ереван 0025, ул. Чаренца 15).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института археологии и этнографии НАН РА.

Автореферат разослан 22-го мая 2017 г.

Ученый секретарь специализированного совета

Кандидат исторических наук

Мелконян. У. А.

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Թեմայի արդիականությունը: Հայագիտության զարգացման գործում մեծ պլանդ ունեն XIX դարի հայ ճանապարհորդ-տեղագիրները, որոնք իրենց շրջագայությունների ընթացքում գրառել ու կորստից փրկել են պատմամշակութային արժեք ներկայացնող մեծաքանակ նյութ: Բովանդակությամբ տարաբնույթ այդ նշխարների շարքում անգնահատելի են պատմաճարտարապետական հուշարձանների նկարագրություններին զուգահեռ վկայակոչված վիմագրերը՝ իբրև պատմական հավաստի սկզբնաղբյուրներ:

Չնայած նրան, որ տեղագրական ուսումնասիրություններում վիմագրերի վերծանությունները հիմնականում սխալաշատ են և հեռու են գիտության մեջ ներկայումս ընդունելի անհրաժեշտ բաղադրիչներից, այդուհանդերձ դրվատանքի է արժանի այն ժառանգությունը, որը մեզ է հասել այդօրինակ ուսումնասիրություններով, քանի որ հրատարակված հազարավոր արձանագրությունների մի մասը ժամանակի ընթացքում բնական ու մարդկային գործոնների արդյունքում մեզ չեն հասել:

Տեղագիր-ճանապարհորդներից ոչ մեկի կյանքն ու գործունեությունը բավարար չափով ուսումնասիրված չէ: Սրանով պայմանավորված՝ սույն ատենախոսության հիմքում XIX դարի տեղագիր-հեղինակ, հոգևոր գործիչ, պատմաբան, վիմագրագետ, բանասեր Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի կյանքի ու գործունեության՝ մինչ այժմ պատշաճ ուշադրության չարժանացած ընդհանուր նկարագիրն է: Հայրուրամյա լռությունից հետո փորձ է արվում վերստին գնահատել և արժևորել Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի գիտական վաստակը:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Ատենախոսության գլխավոր նպատակը տարբեր աղբյուրներից ի մի բերված փաստերի, գիտական ուսումնասիրությունների և տեղեկությունների հետ մեկտեղ Մեսրոպ արք. Սմբատյանցի գործունեությունը ներկայացնելն է: Ամբողջ կյանքը նվիրելով սեփական ժողովրդի բարօրությանը՝ տեղագիրն ուսումնասիրել է հայոց պատմությունը, ժողովրդական ավանդությունները, հոգևոր և նյութական մշակույթը, հուշարձանները՝ սերունդներին փոխանցելով հայագիտական հարուստ ժառանգություն:

Հանգամանորեն ուսումնասիրվել են հեղինակի արխիվային փաստաթղթերը, նամակները, տպագիր ուսումնասիրություններն ու հոդվածներն, որոնք տեղագրական, ազգագրական, հնագիտական, բանահյուսական, պատմագիտական, ժողովրդագրական հարուստ տեղեկություններ են հաղորդում: Առաջին անգամ ուշադրություն է դարձվում Մեսրոպ Սմբատյանցի ձեռագրագիտական վաստակին՝ հանդես գալով իբրև գրիչ և հեղինակ: Նվիրումով և մեծ պատասխանատվությամբ նա կատարել է իր հոգևոր առաքելությունը՝ հիմնելով կրթամշակութային հաստատություններ, որոնց մասին են վկայում մեզ հասած 17 վիմագիր հիշատակությունները:

Մերոպ արք. Սմբատյանցն առաջինն էր, ով երեսուն տարի հավաքել և ընդօրինակել է ավելի քան երկու տասնյակ ուրարտական սեպագրեր և դրել գիտական շրջանառության մեջ: Մեծ հոգևորականի ուշադրությունից չեն վրիպել նաև պատմամշակութային հուշարձանների վրա պահպանված մեկ տասնյակից ավելի այլալեզու վիմագրերը:

Բայց և այնպես Մերոպ Սմբատյանցի գործունեության ամենից կարևոր մասը հայագիտության համար կոթողների վրա պահպանված հարյուրավոր վիմական արձանագրությունների գրառումն է: Նրա տպագիր և անտիպ ուսումնասիրություններում առկա է ավելի քան վեց հարյուր վիմագիր, որոնք վերաբերում են հայոց պատմության գրեթե բոլոր դարաշրջաններին: Առավել կարևորվում են սրբագանի հիշատակած այն արձանագրությունները (մոտ 150), որոնք գտնվում են ՀՀ սահմաններից դուրս և անհասանելի են ուսումնասիրության համար:

Ատենախոսության գիտական նորույթը: Առաջին անգամ համակողմանիորեն ներկայացվում է XIX դարի հայ տեղագիր-հեղինակ Մերոպ արք. Սմբատյանցի վիմագրագիտական գործունեությունը: Նրա ընդօրինակած վիմագրերն այսօր էլ օգտագործվում են ուսումնասիրողների կողմից: Ավելին, նրա արխիվում պահպանված մոտ 40 վիմագրերն ատենախոսության մեջ ներկայացվում են առաջին անգամ:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Մերոպ Սմբատյանցի վերլուծություններով մեզ հասած վիմագրերի արժեքը ճիշտ ընկալելու համար ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք աղբյուրագիտական նյութի պատմաքննական, ժամանակագրական, համեմատական և բնագրային վերլուծությունների մեթոդներով: Ընդօրինակված և վերծանված գրեթե բոլոր արձանագրությունները համեմատվել են նորագույն շրջանի հեղինակների գիտական աշխատություններում, «Դիվան հայ վիմագրության» մատենաշարում տեղ գտած վիմագրերի, ինչպես նաև տեղում՝ բնագրերի հետ:

Օգտագործված գրականության տեսություն: Ատենախոսությունը շարադրելիս օգտվել ենք ավելի քան 180 միավոր գրականությունից և պարբերական մամուլից: Պատմագիտական տեղեկություններ ենք քաղել մատենագրական սկզբնաղբյուրներից (Մովսես Խորենացի, Շղիշե, Մովսես Կաղանկատվացի, Հովհաննես Դրասխանակերտցի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելյան) և ձեռագիր մատյանների հիշատակարաններից: Քննարկվող հարցի համար առաջնահերթ ուսումնասիրվել են առանձին երկրամասերի (Գեղարքունիք, Նախիջևան, Վայոց ձոր, Աղվանք) պատմությունն ու հուշարձանները, իսկ տեղագրական հարուստ նյութերն ընդգրկելու և համեմատական վերլուծություններ կատարելու նպատակով՝ XIX դարի նշանավոր հեղինակների ուսումնասիրությունները (Հովհաննես եպիս. Շահխաթունյանց, Սարգիս եպիս. Ջալալյանց, Ղևոնդ Ալիշան, Մակար եպիս. Բարխուդարյանց, Երվանդ Լալայան, Դանիել արք. Շահնագարյանց, Արիստակես եպիս. Սեդրակյան):

Գեղարքունիքի պատմաճարտարապետական կոթողների վերաբերյալ կան բազմաթիվ հիշատակություններ. դրանց մանրամասն անդրադարձել են Հովհ. Շահխաթունյանցը, Ս. Ջալալյանցը, Ե. Լալայանը, Ղ. Ալիշանը: Առավել սուղ են հրապարակումները պատմական Աղվանքի հայկական բնակավայրերի և հուշարձանների վերաբերյալ: Այդ առումով կարևոր են 1863-1868 թթ. Շամախու թեմի առաջնորդ Դանիել եպիս. Շահնագարյանցի ուղեգրական հիշատակությունները, որոնք հաջորդաբար հրապարակվել են «Արարատ» պարբերականում: Սակայն այս շարքից պատմագիտական և աղբյուրագիտական բացառիկ նշանակություն ունեցող վիմագրեր դուրս են մնացել: Արժեքավոր տեղեկություններ կան պատմաբան, տեղագիր, գրող Մակար եպիս. Բարխուդարյանցի աշխատություններում, ով բուն Աղվանքից և հարակից տարածքներից հավաքել է տեղագրական, ազգագրական, վիմագրական, բանահյուսական հարուստ նյութ:

Օգտակար տեղեկություններ ենք քաղել ազգագրագետ Երվանդ Լալայանի հրապարակումներից, որոնք տեղ են գտել «Ազգագրական հանդես»-ի հատորներում: Թեև նրա հրատարակած վիմագրերի մի մասը կրկնում են նախորդ հրատարակիչներին, քանի որ XIX դարավերջին դրանք չէին պահպանվել, սակայն մեծանուն գիտնականի վիմագրագիտական հարուստ ժողովածուն ամբողջացել է իր կատարված հավաքչական աշխատանքների և ուսումնասիրությունների արդյունքում:

Նորագույն շրջանում վիմագրագիտության մեջ ընդունելի պահանջները ներկայացված են «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի պրակներում: Սակայն թեմայի հետ առնչվող բնակավայրերի վիմագրերն ուսումնասիրելու և համեմատելու համար առանձնացրել ենք խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանում հրատարակված ուսումնասիրությունները, օգտվել ենք Կարո Ղաֆադարյանի, Արզամ Այվազյանի, Սամվել Կարապետյանի մենագրություններից: Գնահատելի են Ա. Այվազյանի աշխատությունները, որոնք նվիրված են Նախիջևանի վիմագրական հարուստ ժառանգությանը: Բուն Աղվանքի հայկական բնակավայրերի պատմության ու հուշարձանների ուսումնասիրության վերաբերյալ օգտագործել ենք Ս. Կարապետյանի և Գ. Ստեփանյանի մենագրություններն ու հոդվածները: Հարկ է ընդգծել Ս. Կարապետյանի նշանակալից ավանդը երկրամասի վիմագրական ժառանգությունն ամբողջացնելու ուղղությամբ: Նա հավաքել և հրատարակել է ավելի քան հինգ հարյուր վիմագիր, որոնց մեծ մասն արդեն գոյություն չունեն XX դարի 80-ական թթ.: Գ. Ստեփանյանը ներկայացնում է Բաքվի հայկական հուշարձանների և Շամախու թեմի վիճակը XIX-XX դդ.: Նմանօրինակ ուսումնասիրությունները թեև շատ չեն, սակայն հաղորդում են տեղեկությունները Աղբրեջանի տարածքում եղած հայկական հուշարձանների և վիմագրերի մասին:

Մակայն ուսումնասիրության հիմնական և կարևոր տեղեկությունները քաղել ենք Մեսրոպ արք. Սմբատյանցի տպագիր երեք ուսումնասիրություններից, արխիվային վավերագրերից ու անտիպ ձեռագրերից:

Իբրև սկզբնաղբյուր՝ օգտագործել ենք Հայաստանի ազգային արխիվի թիվ 246 գործը: Մոտ երկու տասնյակ վավերագիր էլ պահպանվել է Մատենադարանի արխիվային ֆոնդերում: Այստեղ ընդգրկված են հիմնականում կենսագրական, պատմական, գրական, բժշկական նյութեր: Ցավոք, վավերագրերից մի քանիսը հնարավորություն չունեցանք ընթերցելու ախտահարված լինելու հետևանքով:

Առանձին թեմատիկ խնդիրների ուսումնասիրության համար օգտվել ենք XIX-XX դդ. պարբերական մամուլից («Արարատ», «Արձագանք», «Բազմավեպ», «Մուրճ», «Պատմաբանասիրական հանդես», «Էջմիածին», «Լրաբեր հասարակական գիտությունների»):

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ներկայացված թեմայի համակողմանի քննությունը կարող է հիմք հանդիսանալ XIX դարի տեղագիրների կյանքն ու գործունեությունն ուսումնասիրելու ուղղությամբ: Այն կարող է օգտակար լինել պատմաբանների, վիմագրագետների, հայագետների, հայ եկեղեցու պատմությունն ուսումնասիրողների համար:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթաբաժիններով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև հավելվածից, որտեղ ներկայացված են աղյուսակներ, լուսանկարներ և գրչագրեր: Դրանք անմիջականորեն առնչվում են թեմայի ուսումնասիրման հետ:

ԱՏԵՆԱՒՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԱԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԱԲԱՆ

Առաջաբանում ներկայացվում է թեմայի ուսումնասիրման կարևորությունը, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանությունը, հանգամանորեն տրվում է սկզբնաղբյուրների և օգտագործված գրականության վերլուծությունը, կառուցվածքը:

ԳԼՈՒԻՆ ԱՌԱՋԻՆ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՂԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՄԵՍՐՈՊ ՍՄԲԱՏՅԱՆՑԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նվիրյալ միաբաններից էր Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, բարձրաստիճան մի հոգևորական, ում վիճակված էր արժանի տեղն ունենալ վիմագրագիտության ձևավորման գործում:

Ինչպես նշում է տեղագիրը, Սմբատյանց տոհմի ազգաբանությունն սկզբնավորվում է 1625 թվականից: XVII-XVIII դդ. թուրք-պարսկական պատերազմների պատճառով Սմբատյանց տոհմի շառավիղները ստիպված են եղել դեգերել: Ի վերջո՝ 1829 թ. Տեր-Կարապետ Սմբատյանցի (Սրբազանի պապը) ընտանիքը հաստատվել է Նախիջևանում: Նրա կրտսեր որդին՝ Աբրահամ Տեր-Կարապետյան-Սմբատյանցը 1820-1821 թթ. եղել է Կ. Պոլսի հայկական եկեղեցու հոգևոր սպասավորը և դպիրը: Նա հոգևոր գործունեություն է ծավալել նախ

Փորադաշտ գյուղում (Նախիջևանի գավառ), ապա՝ Նորսում (Ճահուկ գավառ): Տեր Աբրահամն ունեցել են ինը գավակ՝ յոթ որդի և երկու դուստր:

Տեր Աբրահամի ավագ որդին էր Մեսրոպ Սմբատյանցը, ում վիճակված էր կրելու բարձրաստիճան հոգևորականի սքեմը և վիմագրագետ-ուսումնասիրողի պատիվը:

Մեսրոպ Սմբատյանցը ծնվել է 1833 թ. մարտի 10-ին Փորադաշտ գյուղում (տապանագրում՝ 1834 թ.): Կրթությունն ստացել է նախ հոր մոտ, ապա՝ Նախիջևանի գավառական ուսումնարանում (1844-1847 թթ.), որն ավարտելուց հետո ընդունվել է Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցը:

1851 թ. Մեսրոպ Սմբատյանցը նշանակվել է Մայր Աթոռի քարտուղար, իսկ 1857 թ. Էջմիածնի Ս. Գայանե վանքում ձեռնադրվել է վարդապետ: Այդ ընթացքում նա զբաղվել է վանական, վարչական, գրական գործունեությամբ: 1859-1861 թթ. նա նշանակվել է Էջմիածնի շրջանի Բաշ Ապարանից՝ Սարդարապատ ընկած 75 գյուղերի հոգևոր գործակալ, ծանոթացել է հուշարձանների վիճակին և հավաքել է վիմագրագիտական նյութեր (Յուլակերտ, Երվանդաշատ, Բագարան, Արմավիր և այլն): 1859-1860 թթ. նա գլխավորել է Մուղնիի Ս. Գևորգ վանքի միաբանությունը:

Հայոց եկեղեցու գորեղացմանը նպաստելու համար ամենայն հայոց Մատթեոս Ա (Չուհաճյան, 1858-1865) կաթողիկոսի կողմից Մեսրոպ Սմբատյանցը ստացել է Էջմիածնի շրջանի ծաղկյա փիլոնի պաշտոնավարությունը արժանանալով «վարդապետական» կոչվող ականակոտ խաչի:

1862-1863 թթ. երիտասարդ հոգևորականը կարգվել է Նոր Բայազետ գավառի՝ Քանաքեռից մինչև Չիրուխլու և Բասարգեչար (ներկայիս Գեղարքունիքի մարզը և Կոտայքի մարզի մի մասը) ընկած հայաբնակ գյուղերի հոգևոր գործակալ: Այդ տարիներին գավառի հուշարձանների մեծ մասը կիսավեր էին, քանի որ երկրամասը դարեր շարունակ ենթարկվել էր ասպատակությունների օտար զավթիչների կողմից: Նրա նախաձեռնությամբ և տեղի բնակչության նյութական աջակցությամբ սկսվում է տեղի պատմական հուշարձանների վերականգնումը: Իր տևական ուսումնասիրությունների արդյունքում ստեղծվում է նրա առաջին ստվար «Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ» աշխատությունը:

1864-1866 թթ. Մեսրոպ Սմբատյանցը եղել է Նախիջևան գավառի Շամբի (Մաղարտա) Ս. Ստեփանոս Նախավկա վանքի վանահայրը և վերանորոգել է վանքի տանիքը: Ապա ստանձնել է Նախիջևան քաղաքի և շրջանի գյուղերի հոգևոր առաջնորդությունը, հավաքել է նյութեր Նախիջևան քաղաքի և գավառի տեղագրության, ինչպես նաև հինգ գավառների՝ Շարուրի, Վայոց ձորի, Երնջակի, Գողթնի, Ջահուկի (Ճահուկ) պատմությանն ու մշակութային արժեքների վերաբերյալ:

1868-1870 թթ. Երևանի փոխբեմակալ առաջնորդ լինելու տարիներին Մեսրոպ Սմբատյանցը կազմել է Երևանի վիճակի վանքերի կալվածքների ցուցակները, հիմնել է «Արտաշատյան ընկերությունը», որը միջոցներ էր տրամադրում Խոր

Վիրապի վանական համալիրի վերանորոգման համար: Այդ ընթացքում նրա անմիջական նախաձեռնությամբ Քանաքեռի Ս. Հակոբ եկեղեցուն կից բացվում է Ս. Սահակ Պարթև թեմական դպրոցը:

1870-1887 թթ. Մեսրոպ Սմբատյանցը եղել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Սինոդի անդամ, իսկ 1875-1879 թթ. Ամենայն հայոց կաթողիկոսի և Օշական գյուղի բնակչության օժանդակությամբ Սուրբ Մաշտոցի դամբարանի վրա կառուցել է Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին: Այդ ընթացքում նա ուսումնասիրել է գյուղի պատմությունը, հուշարձանները, վերծանել վիմագրերը (14 վիմագիր)՝ ամփոփելով իր «Ստորագրություն Օշական գեղջ և նորաբաց դպրոցին յանուն Ս. Մեսրոպյայ թարգմանչին» անտիպ ուսումնասիրության մեջ:

1882 թ. Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանցը կարգվել է Մայր Աթոռի վանական կառավարության նախագահ: Նույն թվականին Գևորգ Դ կաթողիկոսի պատվերով օժել է Ալեքսանդրապոլի (ներկայիս Գյումրի) նորակառույց Ս. Նշան եկեղեցին: 1886 թ. նորընտիր Մակար Ա կաթողիկոսի կոնդակով նա վարել է Գևորգյան հոգևոր ճեմարանի վերատեսուչի պաշտոնը, իսկ 1887 թ. բացել է Կարսի հոգևոր կառավարության ատյանը, որի նպատակն էր Արևմտյան Հայաստանի կրոնական և քաղաքական ժողովների կազմակերպումը: Ի դեպ, այդ ընթացքում նա անվանի ճարտարապետ Թորոս Թորամանյանի հետ երեք օր շրջել է պատմական քաղաքամայր Անիում՝ ծանոթանալով կատարվող հնագիտական պեղումներին:

1887-1894 թթ. Մեսրոպ Սմբատյանցը գլխավորել է Շամախու թեմը (Շիրվանի, Բաքվի և Թուրքեստանի թեմ): Նրա նախաձեռնությամբ և օրհնությամբ, ինչպես նաև տեղի մեծահարուստ հայերի միջոցներով վերակառուցվել են մի շարք կիսավեր եկեղեցիներ, կառուցվել են դպրոցներ:

1888 թ. հունվարի 16-ի թիվ 30 կաթողիկոսական կոնդակով Մեսրոպ Սմբատյանցն արժանացել է արքեպիսկոպոսի պատվո աստիճանի: 1892 թ. հունվարից անդամակցել է Մոսկվայի Կայսերական հնագիտական ընկերությանը, որը մեծ պատիվ էր Էջմիածնի միաբանի համար և պատասխան էր նրա հայանպաստ և տքնաջան աշխատանքի: Մեսրոպ Սմբատյանցը տեղեկություններ է տրամադրել այս ընկերությանը, բացի այդ, նա հնագիտական նմուշներ է ուղարկել Մոսկովյան հանձնաժողովին, որոնց ճակատագիրն այսօր անհայտ է:

1897-1902 թթ. և 1903-1907 թթ. Մեսրոպ արքեպիսկոպոսը ստանձնել է պատմական Երնջակ գավառի Ս. Կարապետ վանքի հոգևոր առաջնորդի պաշտոնը: Այդ տարիներին նա իր տպավորություններն ու ուսումնասիրություններն ամփոփեց «Նկարագիր ս. Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա» գրքում:

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը նամակագրություն է ունեցել Փարիզի գիտնականների, Վենետիկի Մխիթարյան միաբանների, հոգևոր և մշակութային մի շարք գործիչների հետ: Անգնահատելի է նաև նրա դերը ձեռագրերի պահպանման գործում: Նա հավաքել է հայ արվեստի և գրչության անգնահատելի

գանձեր, ընդօրինակել է ձեռագիր հիշատակարանները (մոտ 300 ձեռագիր մատյաններ), Ս. Էջմիածնի մատենադարան է տեղափոխել երկու տասնյակ ձեռագիր, իր կտակի համաձայն՝ նվիրաբերել է ևս 27-ը:

1860-1890-ական թթ. Մեսրոպ Մմբատյանցն Արևելյան Հայաստանի տարբեր վայրերից հայտնաբերել է ավելի քան երկու տասնյակ սեպագրեր, որոնք առնչվում են Ուրարտական պետության (Ք. ա. IX-VI դդ.) պատմության հետ:

Մեսրոպ Մմբատյանցը զբաղվել է նաև պատմագրությամբ, կազմել է 1800-1896 թթ. պատմական իրադարձությունների ժամանակագրությունը: Իբրև ականատես գրառել է XX դարասկզբին Նախիջևանի հայ-թաթարական ընդհարումների պատմությունը: Մեզ են հասել նաև նրա գրական ստեղծագործությունները՝ մոտ մեկ տասնյակ բանաստեղծություններ, քառատողեր, նրա ուշադրությունից չի վրիպել նաև ժողովրդական բժշկությունը:

Չնայած պատկառելի տարիքին ու տկարությանը՝ 1910 թ. աշնանը Մեսրոպ արքեպիսկոպոս Մմբատյանցը մեկնել է Երուսաղեմ, որտեղ էլ մի քանի ամիս անց՝ 1911 թ. փետրվարի 8-ին, մահացել է գերմանական հիվանդանոցում: Երուսաղեմի պատրիարքի և միաբանության համաձայնությամբ նրան ամփոփել են Երուսաղեմի Ս. Փրկչի գերեզմանատանը:

Բ. ՄԵՍՐՈՊ ՄՄԲԱՏՅԱՆՑԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ:

Մեսրոպ արքեպիսկոպոս Մմբատյանցն իրականացրել է մեծածավալ շինարարական աշխատանքներ, որի առհավատյալներն են մեկ տասնյակից ավելի շինարարական բովանդակությամբ արձանագրությունները: Հայտնի է, որ միայն 1872-1910 թթ. ընթացքում նա օձել է 33 եկեղեցի:

Մեսրոպ Մմբատյանցը, գլխավորելով Սուղնիի Ս. Գևորգ վանքի միաբանությունը, 1868 թ. արևելյան վերնահարկում կառուցել է վանական դպրոցի համար նախատեսված սենյակները, բարեկարգել է պարտեզը: 1868-1870 թթ. լինելով Երևանի փոխթեմակալ առաջնորդ՝ նա նորոգել է Երևանի Ս. Սարգիս եկեղեցու առաջնորդարանն ու դպրոցը, ինչպես նաև հայրենի Նորս գյուղի դպրոցը: Պահպանվել են Նորսի Ս. Երրորդություն բազիլիկ եկեղեցու նորոգչական և աղբյուրի կառուցման արձանագրությունները:

1864-1866 թթ. Մեսրոպ Մմբատյանցը Շամբի (Դարաշամբի) կամ Մաղարտայի Ս. Ստեփանոս Նախավկա վանքի վանահայր լինելու տարիներին վերանորոգել է տաճարի տանիքը՝ հիշատակություն թողնելով գանգակատան առաջին հարկի՝ հյուսիսարևմտյան մույթի հարավային նիստին: 1875-1879 թթ. նա Վահան Ամատունու հիմնած (443 թ.) եկեղեցու տեղում հիմնանորոգել է Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին: Ավելի վաղ՝ 1860 թ., եկեղեցուն կից նա բացել է գյուղի ծխական դպրոցը: 1884 թ. ավարտելով եկեղեցու արևելյան մասում գտնվող կրկնահարկ գանգակատան կառուցումը՝ Ս. Մմբատյանցը զբաղվել է վրա տեղադրում է մեծադիր խաչ և վկայարանի պատմությունն ավանդող ծավալուն մի արձանագրություն:

1887-1894 թթ. զբաղեցնելով Շամախու, Անդրկասպյան և Բաքվի թեմակալ առաջնորդի պաշտոնը՝ Մեսրոպ Մմբատյանցը երկրամասում իրականացրել է

շինարարական գործունեություն: Վերակառուցվել կամ կառուցվել են 9 եկեղեցի, 9 դպրոց, այդ թվում՝ Ս. Սաղիանի վանքն ու վանական դպրոցը (բաքվաբնակ Բուդաղյան եղբայրների միջոցներով), Բաքվի աղքատանոցը (մեծահարուստ Դիլդարյանցի աջակցությամբ), Շամախի քաղաքի արական դպրոցը, կառուցվել կամ վերաբացվել են Գանձակ, Գիրք, Ղուլակա (Ղալակա), Քիլվար, Մեյսարի, Ավանաշեն գյուղերի եկեղեցական դպրոցները, Բաքվի հայկական գերեզմանատան Ս. Հարություն մատուռը, Քեալբանդ, Բլիստան կամ Բլիստան, Աղբուլաղ, Արփավուտ, Հնդար, Քովլուջ, Բզավանդ գյուղերի եկեղեցիները:

1897-1907 թթ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը բարեկարգումներ է կատարել Ապրակունիսի Ս. Կարապետ վանքի տարածքում:

Ցավոք, նրա կողմից բարեկարգված կամ կառուցած հիշյալ շինությունների մեծ մասը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս և գոյություն չունեն:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՄԲԱՏՅԱՆՑԻ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿՆ ՈՒ ՎԻՄԱԳՐԵՐԻ ՎԵՐՇԱՆՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Ա. «ՏԵՂԱԳԻՐ ԳԵՂԱՐՔՈՒՆԻ ԾՈՎԱԶԱՐԴ ԳԱՒԱՌԻ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ:

Մեսրոպ արք. Սմբատյանցը մեզ է ավանդել ավելի քան մեկ տասնյակ տպագիր և անտիպ ուսումնասիրություններ, որոնցից յուրաքանչյուրը նրա երկարատև աշխատանքի արգասիքն է համարվում: Ցավոք, այդ ուսումնասիրություններից միայն երեքն են հրատարակվել, որոնցից ամենաարժեքավորը, թերևս, «Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի» տեղագրությունն է: Այն ամփոփում է բազմաբնույթ տեղեկություններ պատմական Գեղարքունիքի և դրա հարակից գավառների վերաբերյալ:

Պատմական Սյունյաց նահանգի Գեղարքունի գավառի էթնոժողովրդագրական կազմը դարեր շարունակ փոփոխվել է՝ պայմանավորված արտաքին քաղաքական իրադրության հետ: Մելջուկ-թուրքերի, մոնղոլ հրոսակների, Լենկ-Թեմուրի և թուրք-պարսկական անընդմեջ պատերազմների, ջալալիների ասպատակությունների (1590-ական թթ.), սովի (1606-1609 թթ.) հետևանքով գավառը մեծ ավերածությունների է ենթարկվել, ծաղկուն բնակավայրերն ամայացել են, բնակչությունը՝ բռնի տեղահանվել: Թուրքմենչայի (1828 թ.) ու Ադրիանապոլի (1829 թ.) պայմանագրերը հնարավորություն տվեցին հազարավոր արևելահայերի ու արևմտահայերի վերաբնակվել ոչ միայն հին ու լքված, այլև նոր հիմնված բնակավայրերում: Նախկին պարսկական Գյոկչայի մահալը վերանվանվեց Նոր Բայազետի գավառ: Կենդանություն ստացան լքված բնակավայրերը, բարեկարգվեցին եկեղեցիներ, դպրոցներ: Դրանում մեծ էր ոչ միայն տեղի բնակիչների եռանդն ու ցանկությունը, այլև Մեսրոպ վարդապետի ներդրումը, որը ջանք ու եռանդ չէր խնայում բարեկալվելու ժողովրդի հոգևոր և կրթական կյանքը:

1862 թ. նշանակվելով Նոր Բայազետ քաղաքի և գավառի հայաբնակ գյուղերի հոգևոր գործակալ՝ նա շրջում էր գրեթե բոլոր բնակավայրերում, հավաքում էր

տեղեկություններ հայկական հուշարձանների վերաբերյալ՝ նպատակ ունենալով ամբողջացնել գավառի մշակութային ժառանգությունը:

«Տեղագիր Գեղարքունի» ուսումնասիրության ամենից կարևոր մասը մոտ չորս հարյուրի հասնող վիմագրերն են, որից ութ տասնյակը մեզ չեն հասել: Փաստորեն, նրա վերծանությունները ձեռք են բերել սկզբնաղբյուրային արժեք: Բացի հայատառ արձանագրություններից, գրքում ներառված են նաև երկրամասից հայտնաբերված այլալեզու վիմագրեր (ռուս., վրաց., արաբ.) և ուրարտական սեպագրեր: Հիշյալ տեղագրական ուսումնասիրությունը քիչ թե շատ հանրագումարի է բերում գավառի հուշարձաններն ու վիմագրերը, որոնց մի մասը մինչ այդ անհայտ էին: Ավելին, կան վիմագրեր, որոնք չեն պահպանվել և հեղինակի շնորհիվ են մեզ հասել:

Չբավարարվելով միայն Գեղարքունի գավառով՝ Մեսրոպ Սմբատյանցն իր գրքում մեծ տեղ է հատկացրել հարակից գավառների պատմական հուշարձաններին ու դրանց վիմագրերին, մասնակի անդրադարձել է նաև Երևանի պատմաճարտարապետական կոթողներին:

Մեսրոպ Սմբատյանցի դերը վիմագրերի ընդօրինակման գործում ավելի լավ ընգծելու նպատակով ատենախոսության այս և հաջորդ ենթագլխում կատարվել է վերծանությունների համեմատական վերլուծություն: Դրա համար օգտագործել ենք հեղինակի տպագիր և անտիպ բոլոր ուսումնասիրություններում տեղ գտած արձանագրությունները, տեղագիրների և նորագույն շրջանի ուսումնասիրությունները, «Դիվան հայ վիմագրության» համապատասխան պրակները: Հավելենք, որ Մ. Սմբատյանցի վերծանությունները հիմնականում ճշգրիտ ու ամբողջական են, այդ իսկ պատճառով դրանցից օգտվել են նորագույն շրջանի մասնագետները (վիմագրագետ Ս. Բարխուդարյանը, հնագետ Կ. Ղաֆադարյանը, Ա. Այվազյանն, Ս. Կարապետյանը և ուրիշներ):

Ատենախոսության մեջ քննության են ենթարկված մի շարք վիմագրերի միջոցով ներկայացվում է Մեսրոպ Սմբատյանցի վերծանության սկզբունքները: Կան վիմագրեր, որոնք իրենց դժվարընթեռնելի լինելու հանգամանքով պայմանավորված կիսատ են վերծանվել: Որոշ վիմագրերում կան անձնական խմբագրման օրինակներ, որոնց հետևանքով բարեբախտաբար վիմագիրը չի կորցրել իր արժեքը: Մեր կողմից առանձնացվել են նմանատիպ գրեթե բոլոր կամ քննելի վիմագրերը:

Բ. ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՍՐՈՊ ՍՄԲԱՏՅԱՆՑԻ ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի տեղագրական մյուս երկու ուսումնասիրությունները թեն զիջում են առաջինին իրենց պատմագիտական արժեքով, սակայն դրանք ևս կարևոր աղբյուրներ են պատմական Աղվանքի և Երևուջակ գավառի հուշարձանների վերաբերյալ: Ցավոք, XIX դարում վերոնշյալ տարածքների վիմագրերը բավարար չափով չեն ուսումնասիրվել:

Պատմական Աղվանքի հուշարձանների և վիմագրերի ուսումնասիրումը սկսվել է XIX դարի առաջին կեսից: Հովհ. Շահխաթունյանցը, Ս. Ջալալյանցը,

Դանիել արք. Շահնագարյանցը, Ղևոնդ Ալիշանը, Մ. Բախտոդարյանցը հաջորդաբար անդրադարձել են երկրամասի հայկական բնակավայրերի տեղագրությանը, պատմական կոթողներին, ժողովրդագրությանը, ազգագրությանը, բանասիրությանը: Այսպես՝ Հովհ. Շահխաթունյանցն իր ուսումնասիրության միայն վերջում թռուցիկ անդրադառնում է Շամախու թեմի նշանավոր Սաղիանի և Մեյսաբու վանքերին՝ հիշատակելով ընդամենը հինգ արձանագրություն, որոնցից երկուսն արդեն չկային XIX դարի 80-ական թթ.: Մ. Ջալալյանցը նշում է ընդամենը չորս արձանագրությունները, իսկ Դանիել արք. Շահնագարյանցն իր հոդվածաշարում ևս տեղ չի հատկացրել վիմագրերին՝ բավարարվելով միայն բնակավայրերի և հուշարձանների նկարագրությամբ:

Աղվանքի հայկական բնակավայրերն ու կոթողներն առավել հանգամանորեն է ներկայացրել Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը, ով եղել է Սաղիանի վանքի վանահայրը և երկդասյա վանական դպրոցի տեսուչը: Հետագայում Մ. Բարխուդարյանցը Շամախի քաղաքի մայր եկեղեցու հոգևոր քարոզիչ էր (1889 թ.), իսկ 1894-1896 թթ.՝ Շամախու թեմի հոգևոր առաջնորդը: Այդ տարիներին հոգևոր գուծունեությանը զուգահեռ նա հավաքել է հարուստ գիտական ժառանգություն: Մ. Բարխուդարյանը ներկայացնում է երկրամասի բնակավայրերի տեղագրությունը, վիճակագրական, ժողովրդագրական տվյալները, պահպանված հայկական կոթողները, մասամբ՝ նաև վիմագրերը: Չունենալով մասնագիտական գիտելիքներ՝ նա փորձել է ճիշտ վերծանել վիմագրերը: Պատահական չէ, որ Մեսրոպ Սմբատյանցը, իմանալով Մակար եպիսկոպոսի հնությունների հանդեպ ունեցած նվիրվածությունը և վիմագրեր վերծանելու հմտությունը, մասամբ օգտվել է նրա հրատարակումներից:

1887-1894 թթ. Մեսրոպ Սմբատյանցը լինելով Շամախու, Բաքվի, Անդրկասպյան տարածքների թեմակալ առաջնորդ՝ շրջել է թեմի հայկական բնակավայրերում, ուսումնասիրել է հուշարձանները, ընդօրինակել վիմագրերը և ամփոփել մեկ գրքում՝ «Նկարագիր սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ՚ի Շամախույ թեմի»: Նա ևս սահմանափակվել է Աղվանքի մի քանի կոթողների ուսումնասիրությամբ: Առավել մանրամասն ուսումնասիրել է Սաղիանի վանական համալիրը, վանքի պատմությունը՝ հիմնադրումից մինչև իր ժամանակները, նշել է կալվածքները, վիմագրերը, վանքի ձեռագրերի ցուցակը: Ժամանակի սղությունը, սրբազանի պատկառելի տարիքը, ճանապարհների բացակայությունը ստիպում էին նրան սահմանափակվել միայն եկեղեցաշեն ու հոգևոր գործունեությամբ: Յավոք, կիսատ մնաց նաև նրա կողմից Բաքվի հայկական հուշարձանների, դրանց վիմագրերի ուսումնասիրումը: Թեև Մակար եպիս. Բարխուդարյանցը հանգամանորեն ներկայացնում է քաղաքի մշակութային և հոգևոր հաստատությունների պատմությունը, սակայն չի հիշատակում վիմագրերը: Բարեբախտաբար, Մ. Սմբատյանցը այստեղից հիշատակում է մեկ տասնյակ վիմագրեր (XIX դարավերջին վերաբերող), որոնք առնչվում են իր հոգևոր և շինարարական գործունեության հետ: Ավելին, հեղինակի արխիվային ֆոնդում գտնվեց «Ստորագրութիւն

վանօրէից և քաղաքաց Բագուայ նահանգի» ուսումնասիրության տեղանունների ցանկը: Փաստորեն, ուսումնասիրությունը, որը մեզ չի հասել, ևս պատրաստ է եղել տպագրության: Հայաշատ Ղուբա քաղաքի հայկական հուշարձանները ևս մնացել են չուսումնասիրված: Այստեղից ևս հիշատակում է չորս վիմագիր, որից երկուսը XIX դարի տապանագրեր են, երկուսը՝ Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման վկայագրեր: Ղուբայից երկու տապանագիր էլ հիշատակում է Մ. Բարխուդարյանը:

«Նկարագիր սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի» տեղագրությունը շարադրելիս՝ Մեսրոպ Մմբատյանցն օգտագործել է նախորդ հրատարակիչների ուսումնասիրությունները, վիմագրերը, վիճակագրական տեղեկությունները, ձեռագիր հիշատակարանները: Հետագա ուսումնասիրողները Շամախու երկրամասի արձանագրություններն օգտագործել են՝ հիմք ունենալով Մ. Մմբատյանցի վերծանությունները: Ընդհանուր առմամբ աշխատության մեջ հիշատակվում է ավելի քան 114 արձանագրություն (այդ թվում եկեղեցական սպասքի վրա), որից 50 անհասանելի էր արդեն XX դարի 80-ական թթ.: Մեր կողմից ուսումնասիրվել են գրքում առկա բոլոր վիմագրերը, դրանք համեմատվել են նախորդ հրատարակումներում և Ս. Կարապետյանի հեղինակած ուսումնասիրություններում տեղ գտած վիմագրերի հետ:

Վիմագրական բավարար նյութ է պարունակում նաև Մեսրոպ Մմբատյանցի «Նկարագիր ս. Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա» ուսումնասիրությունը: Ս. Կարապետի վանքի վանահայր լինելու տարիներին (1897-1907 թթ.)՝ նա հավաքել է նյութեր գավառի պատմաճարտարապետական հուշարձանների, ձեռագիր մատյանների, Ս. Կարապետ վանքի պատմության, վիմագրերի վերաբերյալ:

Ընդհանրապես, Երնջակ գավառի Ս. Կարապետ վանքի պատմությանն ու հուշարձաններին անդրադարձել են XIX դարից սկսած: Հովհ. Շահխաթունյանը վանական համալիրի տարածքից հիշատակում է ընդամենը վեց արձանագրություն: Նույնքան էլ նշում է Ղ. Ալիշանը՝ վիմագրերն արտագրելով Արիստակես եպիս. Սեդրակյանից: Սակայն այս երեք հայագետների ուսումնասիրությունները բավարար չեն վանքի պատմությունն ամբողջացնելու համար, ուստի կարևորվում է Մ. Մմբատյանցի այս ուսումնասիրությունը, որը թեև նախորդի նման լի է բազմաբնույթ տեղեկություններով, սակայն ամփոփում է արձանագրություններ, ձեռագիր հիշատակարաններ, հրովարատակների պատճեններ, տեղագրական և պատմական տեղեկություններ երկրամասի վերաբերյալ: Չթերագնահատելով սրբազանի անխոնջ աշխատասիրությունը, ինչու չէ, նաև արձանագրություններ կարդալու որոշակի հմտությունը, նշանակալից է նրա ներդրումն այն առումով, որ պատմական Երնջակն այսօր անհասանելի է մեր ուսումնասիրության համար, և պահպանված յուրաքանչյուր կոթող, վիմագիր, ձեռագիր հիշատակարան կարևոր տեղեկություն է հաղորդում գավառի պատմության վերաբերյալ:

Պատմական Երնջակ գավառից մինչ օրս հրատարակվել է ավելի քան 850 արձանագրություն, որոնք վերաբերում են X-XIX դդ.: Մ. Սմբատյանցը հիշատակում է 57 արձանագրություն և 26 եկեղեցական սպասքի մակագրություններ:

Սրբազանի գիտական և հատկապես վիմագրագիտական վաստակը հնարավոր չէ գնահատել առանց արխիվային նյութերի մանրամասն ուսումնասիրության: Հեղինակի ձեռագրերը, վիճակագրական, տեղագրական, ժամանակագրական, պատմական ու գրական բազմաթիվ գործերը եղել են սկզբում Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվանի շնորհիվ 57 ֆոնդում, իսկ 1971 թ. դարձել է առանձին արխիվային ֆոնդ: Ձեռագրերի մեծ մասը (245 գործ) գտնվում են Հայաստանի ազգային արխիվում, դրանք վերաբերում են հեղինակի 60-ամյա գործունեության բոլոր բնագավառներին (1850-1910 թթ.): Մ. Սմբատյանցը փորձել է ներկայացնել յուրաքանչյուր գավառի տեղագրությունը, նա նպատակ ուներ հետազայում դրանք ամփոփել մեկ ընդհանուր աշխատության մեջ: Այդ է պատճառը, որ պահպանվել են առանձին ձեռագրեր Սյունյաց աշխարհի Երնջակ, Վայոց ձոր, Վասպուրական նահանգի Գողթն, Նախիջևան, Ջահուկ գավառների, Աղվանքի հայկական բնակավայրերի, հայկական գաղթօջախների, մասամբ նաև Արարատյան դաշտի պատմաճարտարապետական հուշարձանների մասին:

Հեղինակի ձեռագրերի մի մասն էլ գտնվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվի շնորհիվ 217 թղթապանակում: Այստեղ ներառված են 17 միավորներ, որոնք վերաբերում են 1883-1905 թթ.: Ձեռագրերում կան պատմական և ժամանակագրական տեղեկություններ Նախիջևանի 1905-1906 թթ. հայթաթարական ընդհարումների վերաբերյալ: Իբրև ակնանատես՝ նա մանրամասն նկարագրել է Նախիջևանի և Վայոց ձորի հայկական բնակավայրերում թուրքական զավթիչների կողմից տեղի ունեցող վայրագությունները, նաև՝ հայության ինքնապաշտպանական կռիվները:

Մի քանի ձեռագրեր, որոնք հեղինակը պատրաստվում էր հանձնել տպագրության, բացակայում է և՛ Հայաստանի ազգային, և՛ Մատենադարանի արխիվային պահոցներից:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՄՎՈՊՈՍ ՄՄԲԱՏՅԱՆՑԻ ԴԵՐԸ ՎԻՄԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա: ԱՆՏԻՊ ՎԻՄԱԳՐԵՐԸ ՄԵՍՐՈՊ ՄՄԲԱՏՅԱՆՑԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ:
Մեսրոպ Սմբատյանցի շնորհիվ մեզ են փոխանցվել ավելի քան երեք հարյուր վիմագրեր, որոնց քարտեզն ապացույցները չեն պահպանվել: Ավելին, հեղինակի անձնական արխիվից առանձնացրել ենք ևս չորս տասնյակը Հյուսիսային Կովկասի հայկական գաղթօջախներից (Ղրիմ, Վոլգոգորադ, Նոր-Նախիջևան, Պյատիգորսկ), Վրաստանից, Իրանից, Երուսաղեմից, Աղվանքից, Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններից: Արձանագրությունների մի մասը հանգամանքների բերումով սպրդել են ուսումնասիրողների ուշադրությունից կամ էլ մեզ չեն հասել:

Սրբազանը Վոլգոգորադ (Ցարիցին, Ստալինգրադ) կատարած իր ուղևորության ընթացքում գրառել է մի քանի վիմագիր, որոնցից մեկը մեզ չի հասել: Այն գտնվում

է քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու զանգակատան հարավային պատին: Պյատիգորսկում կարևոր հայկական հուշարձաններ չեն պահպանվել, հավանաբար, քաղաքի հայկական եկեղեցին քանդվել է խորհրդային տարիներին: Իսկ Մեսրոպ Սմբատյանցը հիշատակում է Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու մասին, որի զանգակատան պատին ևս եղել է XX դարի շինարարական արձանագրություն: Նա գրառել է ավելի քան մեկ տասնյակ վիմագրեր Վրաստանի Ախալցխա և Աբասթուրան քաղաքներից, ինչպես նաև Կախեթի երկրամասից:

Հատկապես կարևորվում է Ախալցխայի Ս. Փրկիչ կամ Ամենափրկիչ եկեղեցու (1835-1837 թթ.) կառուցման վկայագիրը: Եկեղեցին խորհրդային կարգերի հաստատումից հետո փակվեց, իսկ վերջին տարիների հիմնանորոգումից հետո այդտեղ հաստատվեց մարզպետարանի շենքը: Ս. Փրկիչ եկեղեցու գոյության մասին վկայում են երկու արձանագիր սալիկները, որոնք պահպանվում են Ախալցխայի պատմական թանգարանում: Մեսրոպ Սմբատյանցի ձեռագրերում պահպանվել է եկեղեցու շինարարական վկայագիրը սպիտակ մարմարի վրա, որը ներկայումս գտնվում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հյուսիս-արևելյան ավանդատանը: Քաղաքից հեղինակը հիշատակում է ևս երկու վիմագիր, որոնք նախկինում չեն հրատարակվել:

Մեսրոպ արք. Սմբատյանցի ձեռագրերում տեղեկություններ են պահպանվել նաև Պարսկահայքի հայկական գյուղերի, եկեղեցիների վերաբերյալ: Նա գրառել է երկու վիմագիր Թավրիզի Ս. Աստվածածին եկեղեցուց, որոնք արխիվային փաստաթղթի վնասված լինելու պատճառով թերի են ընթերցվում. առաջինը վերաբերում է XVIII դարի կեսերին, իսկ երկրորդը եղել է եկեղեցու զանգակատան վրա, թվականը չի պահպանվել:

Իր կյանքի վերջին ամիսները Սրբազանը անցկացրել է Երուսաղեմում: Վեհափառին ուղարկած իր նամակներում նա ոչ միայն ներկայացրել է Երուսաղեմում կատարած իր տպավորությունների մասին, այլև գրառել է երեք շինարարական բովանդակության վիմագիր (XIX-XX դդ.):

Մեսրոպ Սմբատյանցը հարյուրավոր արձանագրություններ է հավաքել պատմական Աղվանքից, որոնց մեծ մասն անհասանելի էր արդեն XX դ. 80-ական թթ.: Սակայն նրա ուսումնասիրության հիմնական տարածաշրջանը Վասպուրականի Գողթն և Նախճավան, Սյունիքի Երնջակ և Ճահուկ գավառներ են, որոնք հարուստ են եղել պատմաճարտարապետական հուշարձաններով և վիմագրերով: Արխիվից առանձնացրել ենք ևս մեկ տասնյակը, որոնք ներկայացվում են առաջին անգամ:

Մեսրոպ Սմբատյանցի անտիպ գործերում կան տեղեկություններ Վայոց ձորի բնակավայրերի և հուշարձանների վերաբերյալ: Նա հավաքել է Նախիջևանի և հարակից տարածքների պատմությանն ու մշակութային արժեքների վերաբերյալ տեղեկություններ՝ նպատակ ունենալով հրատարակել «Պատմական գաւառագրութիւն Նախիջուանայ» քաղաքին Հայաստանի և հինգ գաւառակաց

նորին Շարուրայ, Վայոց ձորոյ, Ջահկայ, Երնջակայ և Գողթնեաց» ուսումնասիրությունը, որը մեզ չի հասել:

Ավելի քան երեք տասնյակ վիմագրեր էլ նա հավաքել է Վայոց ձորի Խաչիկ, Գնիշիկ, Կեչուտ, Աղավնաձոր, Կորադիզ, Աղխաչ, Օղբին, Մերս, Մարտիրոս, Արփա, Հերիեր գյուղերի կողոններից, Նորավանքից, Սպիտակավորից: Դրանց մի մասն ուսումնասիրվել է մասնագետների կողմից, սակայն ևս տասը (որից 7-ը չի պահպանվել) առանձնացրել ենք հեղինակի արխիվային ֆոնդերից: Երկու վիմագիր հրատարակվել է համապատասխան մեկնաբանությամբ, մյուսները ներկայացվում են առաջին անգամ:

Կոտայքի մարզի Արամուս գյուղի վիմագրերի միակ վերծանությունները ևս պահպանվել են Մեսրոպ Սմբատյանցի վերծանություններում: Արամուսում պահպանվել են երեք եկեղեցի՝ Ս. Հակոբ, Ս. Նշան կամ Ծիրանավոր, Ս. Աստվածածին: Գյուղի կենտրոնում է գտնվում Ծիրանավոր կամ Ս. Նշան եկեղեցին, որն ըստ ճարտարապետության պատմությունն ուսումնասիրողների՝ կառուցվել է VI դարի 90-ական թթ.: Սակայն հայ պատմագիրներ Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Հովհ. Դրասխանակերտցին եկեղեցու կառուցումը վերագրում են Դավիթ Ա կաթողիկոսին: Նույնը կրկնում են XIX դարի տեղագիրներն իրենց ուսումնասիրություններում: VI-VII դդ. եկեղեցին Դավիթ կաթողիկոսը ոչ թե կառուցել է, այլ նորոգել է՝ միաժամանակ կառուցելով կաթողիկոսարան և բնակելի տուն:

Արդեն IX դարում պարբերաբար ընթացող երկրաշարժերի պատճառով եկեղեցին մեծ վնասներ է կրել, և հայոց իշխան Գրիգոր Բ Սուփանի (859-912/913 թթ.) կողմից այն վերականգնվել է: Իշխանի շինարարական աշխատանքների մասին է վկայում կիսականգուն եկեղեցու պատին եղած երկու տողով գոտևորած իրավականոնական բովանդակության արձանագրությունը, որի հատվածները գտնվում են Ս. Հակոբ եկեղեցու պատերի մեջ:

Ինչպես հիշատակում են տեղագիրները՝ Ս. Հակոբը եղել է գյուղի գործող եկեղեցին: Ղևոնդ Ալիշանը նշում է, որ եկեղեցին քայքայված հողաշեն շինություն էր, աչքի չէր ընկնում իր գեղեցկությամբ, և սրբատաշ քարով հիմնանորոգվել է Տեր Հովհան քահանայի ժամանակ: 1863-1867 թթ. Մեսրոպ Սմբատյանցի նախաձեռնությամբ և գյուղի բնակիչների միջոցներով վերակառուցվում է կիսախարխուլ կառույցը, որի մասին է վկայում հարավային մուտքի վերնամասում՝ մարմարե քարին փորագրված շինարարական արձանագրությունը: Շինարարության ընթացքում Ծիրանավորի սրբատաշ քարերն ու արձանագրության բեկորներն օգտագործվել են իբրև շինաքար, քանի որ ինչպես տեղացիներն են նշում՝ հին եկեղեցուց ոչինչ չի մնացել:

Մեսրոպ Սմբատյանցը կարդացել է նաև Ս. Հակոբ կիսականգուն եկեղեցին գոտևորող արձանագրության երկու տողը: XIX դարի 60-ական թթ. նորոգման ընթացքում այս եկեղեցուն վերագրվող արձանագրության բեկորները ևս հայտնվել են շինության տարբեր հատվածներում: Մեր կողմից փորձ է արվել վերականգնել տեղագրի հիշատակած արձանագրությունը՝ ըստ բնագրի:

Ենթադրվում է, որ այս վիմագիրը ևս եղել է Ծիրանավորի պատին, պարզապես Մեքոպ Սմբատյանցը շփոթել է գտնվելու վայրը: Մանավանդ վիմագրի որոշ հատվածներ համընկնում են. այսպես՝ մի արձանագրության սկիզբը՝ «Այս յիւաքանչիւր մուննասի հարկէ եւ ի շարհետէ եւ ի կոռ եւ ի Բէկարէ...Արքունի չարէ», համընկնում է հաջորդ վիմագրի առաջին տողի վերջին հատվածի հետ՝ «Քահանայս իւրաքանչիւր տունս ի հարկէ, եւ ի շարհետէ եւ ի կոռ ու բէկարէ եւ յամեն արքունի չարէ»:

Այս արձանագրությունները փաստում են, որ Գրիգոր Բ իշխանը ոչ միայն գնել է Արամուսը և նորոգել է արդեն գոյություն ունեցած եկեղեցին, այլև այն ազատել է հարկերից ու տուրքերից:

Արամուսի հարավարևելյան մասում, բլրի վրա կանգուն է սրբատաշ Ս. Աստվածածին մատուռը (ներկայիս գերեզմանատան տարածքում), որը դարձյալ նորոգել է Գրիգոր Բ Սուփանը՝ թողնելով մատուռը գոտևորած մեկտողանի արձանագրություն: Այս վիմագրի հատվածները ևս նորոգման ընթացքում (1893 թ.) հայտնվել են շինության տարբեր մասերում:

Սրբազանը վիմագիր է գրառել նաև Ապարանի տարածաշրջանի Աստվածընկալ եկեղեցուց, ինչպես նաև Ամբերդի Ս. Աստվածածին եկեղեցու հարակից տարածքից. վերջինս մեզ չի հասել:

Մեքոպ Սմբատյանցն ուսումնասիրել է նաև Օշականի հուշարձաններն ու վիմագրերը: Ատենախոսության մեջ ներկայացված են այն հուշարձաններն ու վիմագրերը, որոնք հիշատակվում են նրա կողմից: Դրանցից է Դիդի Կոնդի արևմտյան բլրալանջի մատուռը՝ Թուխ Մանուկ (XVII-XVIII դդ.) անվամբ, որը հեղինակի գրառումներում հիշատակվում է Սբ. Սահակ: Այստեղից նա հիշատակում է երկու վիմագիր:

Գյուղի հյուսիսային մասում կանգուն է Մանկանոց կամ Ս. Սիոն քառախորան եկեղեցին (VII դար), որի հարավային պատից Մեքոպ Սմբատյանցը գրառել է նվիրատվական կիսատ մի արձանագրություն:

Օշականի ձորամիջի կամրջից քիչ հեռու բարձրության վրա է գտնվում Ս. Սարգիս մատուռը, որ հայտնի է նաև Թարգմանչաց ուխտատեղի անվամբ: Մատուռի մի մասը սրբատաշ քարից է, մյուս մասը ժայռափոր է, վերջին անգամ վերանորոգվել է 1960-70-ական թթ: Մատուռի մուտքի կամարին և շարունակաբար բարավորին կա արձանագրություն, որը Հովհ. Շահխաթունյանցն անվերծանելի է համարել: Մեքոպ Սմբատյանցն այն վերծանելի է կիսատ և թերություններով:

Օշականն ավելի քան 1500 տարի սրբավայր և ուխտատեղի է աշխարհասփյուռ հայության համար, քանի որ այն կապված է հայ մեծ լուսավորիչ Մեքոպ Մաշտոցի անվան հետ: Ս. Մաշտոցի դամբարանի վրա Հայոց իշխան Վահան Ամատունու նախաձեռնությամբ 443 թ. կառուցվում է գմբեթավոր եկեղեցի: Հայտնի է, որ եկեղեցին կանգուն էր XIII դարում, եղել են չորս նվիրատվական արձանագրություններ, որոնք չեն պահպանվել: Արդեն XVII դարում եկեղեցին կիսավեր էր, և 1639-1645 թթ. Փիլիպոս Ա Աղբակեցի

կաթողիկոսի նախաձեռնությամբ նորոգվել է, սակայն չի պահպանվել շինարարական արձանագրությունը: Ինչպես վկայում է Մեսրոպ Սմբատյանցը, եկեղեցին նորոգվել է պարբերաբար, դա երևում էր շինության արտաքին պատերից: XIX դարի կեսերին եկեղեցին շարունակում էր մնալ կիսավեր: Թեև 1840 թ. մասնակի նորոգվել է, սակայն այն բավարար չէր. քայքայվել էր արևմտյան պատը, խոնարհվել էր տանիքը, պահպանվել էր միայն ավագ խորանը, հարավային և հյուսիսային պատերի մի մասը:

Դեռևս 1851 թ. Ներսես Աշտարակեցին լինելով Օշականում և տեսնելով եկեղեցու անմխիթար վիճակը՝ խոստանում է վերաշինել այն: Սակայն ոչ՝ նրա, ոչ՝ էլ Մատթեոս Ա կաթողիկոսի կողմից այն իրականություն չդարձավ: Ի վերջո, 1875-1879 թթ. Գևորգ Դ կաթողիկոսի և Օշականի ազգաբնակչության նախաձեռնությամբ հիմնանորոգվում է Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին: Մեսրոպ Սմբատյանցի ձեռագրերում պահպանվել է նաև եկեղեցու հատակագիծն ու նախագիծը, որը մանրամասն ուսումնասիրելիս հայտնի է դառնում, որ կառույցը որոշ փոփոխություններ է կրել ժամանակի ընթացքում: Եկեղեցու գլխավոր արևմտյան մուտքի վերնամասում կա շինարարության մասին վկայող հիշատակություն, իսկ օժման օրը ներկա էին Թիֆլիսի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի հոգևոր առաջնորդները, Մուղնիի Ս. Գևորգ վանքի միաբանները, ժողովուրդը:

Բ. ՈՒՐԱՐՏԵՐԵՆ ԵՎ ԱՅԼԱԼԵԶՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՍՐՈՊ ՍՄԲԱՏՅԱՆՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: Վանի թագավորության շրջանում (Ք. ա. IX-VI դդ.) Հայկական լեռնաշխարհի տարածքում օգտագործվել են աքքադերենն ու ուրարտերենը: Հայտնաբերված ուրարտերեն արձանագրությունների թիվը հասնում է 800-ի: Ըստ բովանդակության՝ դրանք լինում են շինարարական, ռազմական, ծիսապաշտական, տնտեսական:

Հայաստանում ուրարտագիտության սկզբնավորման համար հիմք հանդիսացավ XIX դարի 60-90-ական թթ. Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններից Մեսրոպ Սմբատյանցի կողմից հայտնաբերված մոտ երկու տասնյակ սեպագրերը. միայն Արմավիրից նա հայտնաբերել է 12 սեպագիր:

1892 թ. Մոսկվայի Գայսերական հնագիտական ընկերությունը, հետաքրքրված նրա ուրարտագիտական հայտնագործություններով, խնդրում է ընկերությանը տրամադրել սեպագրերի իր հարուստ հավաքածուն: Արդյունքում, 1896 թ. արևելագետ, հնագետ Միխայիլ Նիկոլսկին հրապարակում է սեպագրերի լուսանկարները՝ տալով տեքստերի տառադարձությունը, թարգմանությունը:

Մեսրոպ Սմբատյանցը Մուրմալուի Յուլակերտ (նախկինում՝ Դաշրուռուն, ներկայիս՝ Թուրքիա) գյուղի տարածքից հայտնաբերել է երկու քարի վրա պահպանված նշանագրեր (Ք. ա. II հազարամյակի վերջ-I հազարամյակի սկիզբ), որոնք դասվում են գծային-առեղծվածային գրերի շարքը: Դրանք մինչ օրս լուսաբանված չեն: Սրբազանը ենթադրում է, որ այդ նշանագրերն առնչվում են հաթյան ինթական գրերի հետ: Կարծիք կա նաև, որ ցուլակերտյան նշանագրերը հայկական մեհյաններում գործածվող մեհենական գրեր են, որոնք նման են

Մյունիքի ժայռապատկերներին: Հեղինակը նշում է, որ նմանատիպ նշանագրեր կան նաև Շիրակի Հոռոմ գյուղի արևելյան քարափների վրա, Մաստարա գյուղի ձորակում:

Մեսրոպ արք. Սմբատյանցը Արևելյան Հայաստանի տարբեր վայրերից հայտնաբերել է նաև մեկ տասնյակից ավելի հունարեն, վրացերեն, արաբերեն, պարսկերեն, ռուսերեն արձանագրություններ: Դրանց շարքում առավել ուշագրավ են վրացերեն արձանագրությունները, որոնք հիմնականում պահպանվել են երկրի հյուսիսարևելյան տարածքներում և տեղեկություններ են հաղորդում միջնադարյան Հայաստանի, հատկապես Զաքարյան իշխանական տոհմի գործունեության, հայ-վրացական կապերի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, ներքին կյանքի, պատմության, մշակույթի, պատմական հուշարձանների կառուցման վերաբերյալ:

Վրացերեն արձանագրություններով հարուստ է Թեժառույթի վանական համալիրը (շինարարական և հիշատակագրային բովանդակության ինը արձանագրություն): Մեսրոպ Սմբատյանցը դրանք ընդօրինակել է թերություններով, տառախալաներով՝ լեզվին չտիրապետելու պատճառով: Մեկ այլ վրացերեն արձանագրություն էլ նա ընդօրինակել է Սևանա թերակղզու Ս. Աստվածածին եկեղեցու տարածքից:

Ատենախոսության այս ենթագլխում ներկայացված են այլալեզու մեկ տասնյակ վիմագրեր (արաբերեն, պարսկերեն, հունարեն):

Շամախու թեմի առաջնորդ լինելու տարիներին Մեսրոպ Սմբատյանցն ուսումնասիրել է Անդրկասպյան երկրների հնությունները և ընդօրինակել Դերբենտի պարսպի հարավային դարպասի ճակատին փորագրված վկայագիրը: Նույն պարսպի հյուսիսային արտաքին պատին պահպանվել է աղվաներեն մի արձանագրություն. այն Դերբենտ անվան աղվանական ձևն է, թարգմանվում է «Դռան սահման» և թվագրվում է VI-VII դդ:

Մեսրոպ Սմբատյանցը համարվում է այն եզակի ուսումնասիրողներից մեկը, ով կարևորել է ուրարտերեն և օտարալեզու արձանագրությունների հավաքումն ու ընդօրինակումը: Պատահական չէ, որ XIX դարեվերջին նրան համարում էին «Նախահայր գիտի բևեռագիր արձանագրությունների», քանի որ Արևելյան Հայաստանի տարածքից նա առաջինը հայտնաբերեց սեպագրերը տարիների ընթացքում դրանց թիվը հասցնելով ավելի քան երկու տասնյակի:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեսրոպ Սմբատյանցն ապրեց բովանդակալից կյանք՝ սերունդներին թողնելով գիտական հարուստ ժառանգություն: Բազմաշխատ հեղինակի գործունեությունը գնահատելի է հայագիտության զարգացման գործում: Ատենախոսության թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց բացահայտել Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցին իբրև հոգևոր գործիչ, վիմագրագետ, պատմաբան և շինարար: Ուսումնասիրելով նրա արխիվային բոլոր փաստաթղթերը, նամակները, տպագիր հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնք հաղորդում են տեղագրական, ազգագրական,

հնագիտական, բանահյուսական, պատմագիտական, ժողովրդագրական տեղեկություններ, կարելի է եզրակացնել՝

- Մերոպ Մմբատյանցն իր ավանդն ունի հայ ձեռագրագիտության մեջ, նա ներկայանում է իբրև գրիչ և հեղինակ: Ավելին կորստից փրկել է ավելի քան 40 ձեռագիր:

- Նվիրումով և մեծ պատասխանատվությամբ նա կատարել է իր հոգևոր առաքելությունը՝ հիմնելով հոգևոր, մշակութային, կրթական հաստատություններ, որոնց մասին են վկայում մեզ հասած 17 վիմագիր հիշատակությունները:

- Նա առաջինն էր, ով հավաքել և ընդօրինակել է ավելի քան երկու տասնյակ ուրարտական սեպագրեր, շուրջ երեսուն տարի տեղեկություններ է հաղորդել արևմտյան գիտնականներին, ովքեր էլ սեպագրերը դրել են գիտական շրջանառության մեջ:

- Մեծ հոգևորականի ուշադրությունից չեն վրիպել նաև պատմամշակութային հուշարձանների վրա պահպանված մեկ տասնյակից ավելի այլալեզու վիմագրերը:

- Բայց և այնպես, Մերոպ Մմբատյանցի գործունեության ամենից կարևոր մասը հայագիտական ուսումնասիրությունների մեջ պատմական կոթողների վրա պահպանված հարյուրավոր վիմական արձանագրությունների գրառումն է: Նրա տպագիր և անտիպ աշխատություններում կան շուրջ վեց հարյուր վիմագրեր, որոնք վերաբերում են հայոց պատմության գրեթե բոլոր դարաշրջաններին:

- Առավել կարևոր են սրբազանի հիշատակած այն արձանագրությունները, որոնք գտնվում են ՀՀ սահմաններից դուրս և անհասանելի են ուսումնասիրության համար: Այդ առումով էլ պատմական Ադվանքի, Նախիջևան, Գողթն, Շահապոնք, Երնջակ գավառների արձանագրություններն իբրև սկզբնաղբյուրներ մեզ են հասել հիմնականում անաղարտ ու ամբողջական: Այս երկրամասերից գրառած մոտ երեք հարյուր վիմագրերի քարեղեն ապացույցներն արդեն չկային XX դարի 80-ական թթ.:

- Նրա արխիվում պահպանվում են նաև 40 չլուսաբանված վիմագրերի ընդօրինակություններ, որոնց չնչին մասն է մեզ հասել: Այդ վիմագրերը ներկայացվում են առաջին անգամ:

Տեղագիր, պատմաբան Մերոպ արքեպիսկոպոս Մմբատյանցի ապրած կյանքն և գործը պատիվ է յուրաքանչյուր ճշմարիտ հայի համար, նրան վստահված էր հայ առաքելական եկեղեցին, այդ եկեղեցու բարօրության ապահովումը, ժողովրդի հոգևոր հարստությունների պահպանումը:

ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ

ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ադամյան Ս., Մերոպ արքեպիսկոպոս Մմբատյանցի վիմագրագիտական գործունեությունը, «Էջմիածին», 2007, ԺԱ, հոկտեմբեր, էջ 103-110:

2. Ադամյան Ս., Մեպագիր և այլալեզու արձանագրությունները Մեսրոպ Սմբատյանցի աշխատություններում, Մերձավոր Արևելք, V, (պատմություն, քաղաքականություն, մշակույթ), Երևան, 2008, էջ 169-177:
3. Ադամյան Ս., Ախալցխայի նորահայտ արձանագրությունները, «Տարեգիրք», ԵՊՄՀ, պատմություն և հասարակագիտություն, 2015, 1, էջ 7-17:
4. Ադամյան Ս., Մեսրոպ Սմբատյանցի շինարարական գործունեությունը, «Էջմիածին», 2016, Դ, էջ 122-131:
5. Ադամյան Ս., Անտիպ վիմագրերը Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի ուսումնասիրություններում, «Էջմիածին», ԺԱ, 2016, էջ 138-143:
6. The epigraphs of Aramus according to the records by Mesrop archbishop Smbatyants, Aramazd, AJNES, volume IX, issue 2-2015 [2016], page 122-128.
7. Ադամյան Ս., Անտիպ վիմագրեր Վայոց ձորից, «Տարեգիրք», ԵՊՄՀ, պատմություն և հասարակագիտություն, 2017, 3, էջ 75-82:

**СУСАННА ХАЧАТУРОВНА АДАМЯН
ЭПИГРАФИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРХИЕПИСКОПА МЕСРОПА
СМБАТЬЯНЦА**

РЕЗЮМЕ

В XX веке армянские топографы внесли большое вложение в развитие арменоведения. Они в основном были священниками и во время их походов собирали содержательные материалы, в том числе и эпиграфические (лапидарные) надписи. В их анализах были недочёты, а найденные ими надписи и издательства были далеки от научного, но, несмотря на эти недостатки, их работа была несравненной, так как часть из тысячи изданных летописей, в течение времени, в результате природных и человеческих факторов, до нас не дошли. К сожалению, жизнь и деятельность ни одного из местных путешественников достаточно не изучена. Поэтому местный автор, духовный деятель, историк, литограф, поэт, архиепископ XIX века Месроп Смбатьянец до сих пор не был образцом, и не был удостоен внимания. После столетнего молчания, наконец, попытались оценить жизнь и деятельность Месропа Смбатьянца. Богатый опыт, основные знания, работоспособность, дали ему возможность представиться и как священник, и как арменовед, и как создатель, и как литограф. Главной задачей было представить факты и доказательства, приведённые из разных источников, научных исследований и сведений, а также все детали шестидесятилетней деятельности М. Смбатьянца, которые основаны на частично известных фактах, но пока не вошедших в научную сферу материалов. Всю жизнь посвятив своему народу, он изучал историю армян, их привычки, духовную и материальную культуру, памятники. М. Смбатьянец передавал поколениям, богатые знания и наследство, которым до сих пор руководствуются учёные. Были изучены, взятые из архива, все документы, письма, напечатанные статьи и работы, в которых переданы все топографические, этнографические, археологические, фольклорные, исторические сведения. Впервые обращается внимание на научно-рукописные работы Смбатьянца, он представлен и как автор, и как писатель. С преданностью и с большой

ответственностью он выполнил свою духовную миссию, основывая духовные, культурные и образовательные учреждения. М. Смбастьянц был первым, кто за 30 лет собрал более двух десятков урартских писаний и внёс в науку. Не остались без его внимания и надписи на исторических памятниках, сохранённые на более десяти языках, которые имеют большое значение как для изучения армянской истории, так и для изучения историй других народов. Часть летописей представлена впервые. Также являются новыми ряд документов из архива, где большое место занимают этнографические, топографические, статистические сведения, есть также рукописные карты, местности и чертежи памятников. Но самая основная часть деятельности М. Смбастьянца в исследованиях - это записи, в которых есть данные о сохранившихся на исторических памятниках ,тысяча лапидарных надписей. В его трудах и издательствах есть около 700 летописей, которые относятся к истории армян разной эпохи. Наиболее важны те летописи, которые находятся за пределами Армении и недоступны для исследования и изучения. Летописи таких провинций, как Агванк, Нахичеван, Гохт, Шагапонк, Ернджак, дошли до нас, как первоисточники, в основном в целостности и сохранности. Взятых с этих мест, около 300 надписей на камнях, которые были доказательством, уже не было в XX веке в 80-ых годах.

SUSANNA KH. ADAMYAN

**THE EPIGRAPHICAL ACTIVITY
OF MESROP ARCHBISHOP SMBATYANTS**

SUMMARY

The surveyors of XIX century greatly contributed to the development of Armenian studies. They were mostly clergymen and during their trips gathered materials of different contents, including lapidary inscriptions. Their deciphering had some shortcomings and the process of collecting and publishing the inscriptions was far from being strictly scientific, however despite such shortcomings, their work is invaluable, because a significant part of thousands of published inscriptions did not reach our times because of natural and human factors.

Unfortunately, none of the surveyor-traveler's life and work has been studied sufficiently. The main purpose of this dissertation is a general overview of the life and the career of the XIX century surveyor, author, spiritual leader, historian, epigraphist, philologist Archbishop Mesrop Smbatyants, which so far did not receive proper attention. After a century of silence, thus is an attempt to re-assess and appreciate the life and work of Archbishop Mesrop Smbatyants. Rich life experience, profound knowledge, untiring diligence enabled him to present himself as a zealous priest, a researcher, an engineer, an epigraphist.

Another objective of the dissertation is to represent facts and information, all details of M. Smbatyants's rich activity during sixty years combined with scientific studies,

which are based on partly known facts and materials which have not been included into scientific circulation yet. By devoting the entire life to well-being of his nation, the surveyor studied Armenian history, traditions, material and spiritual culture, monuments, passing a rich heritage of Armenian studies and sources to future generation, which guide and lead the researchers until today.

All archival documents, letters, published articles and documents of the author were studied in details. They report on topographic, ethnographic, archaeological, folklore, historical, demographic information. For the first time, an unpublished work of M. Smbatyants is discussed, where he presents himself as an author and a writer. He fulfilled his spiritual mission with dedication and responsibility by establishing spiritual, cultural and educational institutions, which are evidenced by 17 extant epigraphic records. M. Smbatyants was the first, who thirty years collected and copied more than two dozen of Urartian cuneiform and invented them into scientific circulation. The great clergyman did not miss more than dozen inscriptions in foreign languages preserved on historical and cultural monuments: they are very important for the study of both Armenian and foreign history. A part of those inscriptions is presented for the first time. A number of documents are newly discovered, in which ethnographic and topographic, demographic and statistical information play an important role, there are also handmade maps, plans of settlements and monuments. Nevertheless the most important part of Mesrop Smbatyants's activity in Armenian studies is the records of hundreds of inscriptions preserved on historical monuments. There are over seven hundred lapidaries in his published and unpublished works, which refer to almost all periods of Armenian history. Even more important are the inscriptions mentioned by the archbishop, which are out of frontiers of contemporary Armenia and unreachable for study. In this sense, the epigraphic inscriptions as sources of Aghvank, Nakhijevan, Goghtn, Shahaponk and Yernjak history mainly reached to us flawless and complete due to his records. Over 300 epigraphic proofs of these regions had not existed since in 80-s of the XX century. Dozen inscriptions are still in use by researchers, although there are over 40 other inscriptions preserved in his archive and not re-discovered, which we present and invent into scientific circulation for the first time.